

Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ-ԳԻՒՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆՎԱԶՈՒՄՆԵՐԸ ՍՊՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Կլինիկական բժշկագիտության հնագույն մասնաճյուղերից են մանկաբարձությունն ու գինեկոլոգիան։ Չնայած դրան, մինչև սովետական կարգերի հաստատումը, ազգաբնակչության մանկաբարձա-գինեկոլոգիական օգնության կազմակերպման աշխատանքները Հայաստանում գտնվում էին ցածր մակարդակի վրա, որի պատճառով էլ մոր և մանկան մահացությունը հասնում էր հսկայական թվերի։ Մանկաբարձա-գինեկոլոգիական առաջին բաժանմունքը հիմնադրվել է 1919 թ., Երևանի քաղաքային հիվանդանոցում, Գ. Հ. Արեցյանի ղեկավարությամբ։ Սովետական կարգերի հաստատման նախօրյակին Հայաստանում կար ընդամենը մեկ մանկաբարձ-գինեկոլոգ և 3 մանկաբարձուհի։

Դրությունը փոխվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո։ 1921 թ. ստեղծվեց Հայկ ՍՍՀ առժողովումատի մոր և մանկան պահպանության բաժինը, իսկ 1922 թ. հիմնադրվեց Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը, որտեղ Գ. Հ. Արեցյանի անմիջական ղեկավարությամբ ստեղծվեց մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոն։ Այսպիսով, Հայաստանում գիտական մանկաբարձության հիմքերը դրվեցին։

1925 թ. հանրապետությունում արդեն կային 9 մանկաբարձ-գինեկոլոգ և 25 մանկաբարձուհի, իսկ 1930 թ. մանկաբարձ-գինեկոլոգների թիվը հասավ 14-ի, մանկաբարձուհիներինը՝ 104-ի¹։

Պրակտիկ աշխատանքներին զուգահեռ Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգները զբաղվում էին նաև գիտահետազոտական

1 Մարգարյան Պ. Հ., Սննդօգնությունը Հայաստանում սովետական իշխանության 30 տարում, Մանկաբարձության և գինեկոլոգիայի գ/հ ինստիտուտի աշխատությունների ժողովածու, Երևան, 1952, էջ 7—20։

աշխատանքներով, որոնք հիմնականում ելնում էին կիրառական բժշկության պահանջներից:

Մանկաբարձության և գինեկոլոգիայի ասպարեզում կատարված ամենախոշոր միջոցառումը 1931 թ. մայրության և մանկության պահպանության ինստիտուտի հիմնադրումն էր Երևանում, որը 1937 թ. վերափոխվեց մանկաբարձության և գինեկոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի: Բացառիկ է ինստիտուտի գերը ազգաբնակչության մանկաբարձա-գինեկոլոգիական օգնության կազմակերպման, կադրերի պատրաստման, գիտա-մեթոդական աշխատանքների և Հայաստանում մանկաբարձա-գինեկոլոգիական գիտության զարգացման գործում:

Մանկաբարձությունը և գինեկոլոգիան մեծ զարգացում ունեցան հետպատերազմյան ժամանակաշրջանում: Արդեն 1950 թ. մանկաբարձա-գինեկոլոգիական մահճակալների թիվը զգալիորեն գերազանցեց նախապատերազմյան մակարդակը, իսկ մանկաբարձ-գինեկոլոգների թիվը 68-ից հասավ 147-ի:

Հետպատերազմյան տարիներին կատարված գիտա-կազմակերպական աշխատանքները նպաստեցին հանրապետությունում զգալիորեն լավացնելու մանկաբարձա-գինեկոլոգիական բուժ-պրոֆիլակտիկ հիմնարկների աշխատանքի հիմնական ցուցանիշները, իշեցնելու մոր և մանկան մահացության տոկոսը:

1965 թ. Հայաստանում կային 396 մանկաբարձ-գինեկոլոգ, 2345 մանկաբարձուհի, ավելի քան 2387 մանկաբարձական և 416 գինեկոլոգիական մահճակալ²:

Այժմ հանրապետության բոլոր շրջաններն ու քաղաքներն ապահովված են մանկաբարձ-գինեկոլոգներով ու մանկաբարձութիներով, որոնց մեջ թիվ չեն նաև հմտութասնագետները: Նրանք պրակտիկ աշխատանքները զուգորդում են գիտական գործունեության հետ, իրենց համեստ լուման ներդնելով մանկաբարձա-գինեկոլոգիական գիտության զարգացման մեջ:

Ազգաբնակչության մանկաբարձա-գինեկոլոգիական օգնության կազմակերպման, ինչպես նաև Հայաստանում մանկաբարձության և գինեկոլոգիայի զարգացման գործում զգալի աշխատանք են կատարել Ս. Կ. Կրուպսկայայի անվան մանկաբարձության և գինեկոլոգիայի գիտա-հետազոտական ինստիտուտը, բժշկական և բժիշկների վերապատրաստման ինստիտուտների մանկաբարձության մանկաբարձա-գինեկոլոգիական օգնության նվազում-ները Հայկ. ՍՍՀ-ում, «Բժշկական գիտական տեղեկատու», Երևան, 1965, № 2, էջ 11—13:

2 Մարգարյան Պ. Հ., Մանկաբարձա-գինեկոլոգիական օգնության նվազում-ները Հայկ. ՍՍՀ-ում, «Բժշկական գիտական տեղեկատու», Երևան, 1965, № 2, էջ 11—13:

Ճության և գինեկողոգիայի ամբիոնները, ինչպես նաև Հանրապետության մանկաբարձ-գինեկողոգների գիտական ընկերությունը:

Խոսելով Հայաստանում՝ մանկաբարձա-գինեկոլողիական գիտության նվաճումների մասին, չի կարելի չնշել Գ. Հ. Արեցյանի, Ա. Մ. Ահարոնովի, Մ. Լ. Ռենիգեր-Արեցյանի, Պ. Հ. Մարգարյանի, Բ. Գ. Սայադյանի, Ն. Մ. Ալլամազյանի և ուրիշների մեծ ծառայությունները այդ ասպարեզում:

Հատկապես մանրաժեշտ է հիշատակել Հայաստանում գիտական մանկաբարձության հիմնադիր, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. Գ. Հ. Արեցյանին, որի անվան հետ են կապված Հայաստանում մանկաբարձա-գինեկոլոգիական առաջին բաժանմունքի, պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի (Հետազյում բժշկական ինստիտուտի) մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնի և Ն. Կ. Կրուպսկայայի անվան մանկաբարձության և գինեկոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի հիմնադրումը:

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում աճեց մանկաբարձ-գինեկոլոգների մի համաստեղություն, որի ներկայացուցիչները պրակտիկ աշխատանքներին զուգահեռ զբաղվում են նաև գիտա-մանկավարժական գործունեությամբ։ Պատմական կարճ ժամանակաշրջանում պաշտպանվել են շուրջ 30 դիսերտացիա, որոնցից 5-ը դոկտորական։ Ստեղծվել է Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգների գիտական դպրոց, որը ոչ միայն նպաստեց հանրապետությունում բժշկագիտության զարգացմանը, այլ նաև իր համեստ լուման ներմուծեց սովետական մանկաբարձության և գինեկոլոգիայի զարգացման գործում։

Նախ անհրաժեշտ է հիշատակել մի շարք դասագրքերի և ուսումնական ձեռնարկների հրատարակումը բժշկական ինստիտուտի և ուսումնարանների ուսանողների համար։ Թարգմանվեցին և հրատարակվեցին Կ. Սկրոբանսկու «Մանկաբարձությունը» (1943) և Ֆ. Ցաշկեի «Գինեկոլոգիան» (1944)։ Բացի այդ, Հայ մանկաբարձ-գինեկոլոգները ստեղծեցին նաև իրենց ինքնուրույն գործերը՝ 1936 թ. Ա. Մ. Ահարոնովը հրատարակեց «Դեղատոմսերը մանկաբարձության և գինեկոլոգիայի մեջ» աշխատությունը, որը հետագայում հրատարակվեց 1941 թ. Ուժայում և 1960 թ.³ Երևանում էլ ավելի արժեքավոր է նույն հեղինակի «Օպերատիվ մանկաբարձությունը», որտեղ բացահայտված են մանկաբարձական պրակտի-

³ Агаронов А. М., Оперативное акушерство, Ереван, 1961, стр. 151.

Կայում առավել կարևոր նշանակություն ունեցող հարցերը: Հեղինակը հիմնականում կանգ է առնում՝ մանկաբարձական նախապատրաստական, ծննդաբերությունն ավարտող, ընկերքային ու հետընկերքային գործողությունների վրա, միաժամանակ մեծ տեղ տալով հղության արհեստական ընդհատման և պտղաճատման գործողություններին: Մեծ արժեք են ներկայացնում նաև Պ. Հ. Մարգարյանի «Մանկաբարձություն» ձեռնարկը (1938 թ.), «Մանկաբարձության և գինեկոլոգիայի դեղատոմսերի տեղեկատուն» (1960 թ.) և «Գինեկոլոգիայի գասագիրքը» (1960 թ.):

Անցած տարիների ընթացքում հրատարակվել են նաև գիտամասսայական մի շարք աշխատություններ, այդ թվում՝ Պ. Հ. Մարգարյանի «Կնոջ հիգիենան» (1934, 1946, 1950), Վ. Ա. Բուդայանի «Աղջկա հիգիենան» (1950), Ս. Ա. Բիշարյանի «Վիժուալը և նրա հետևանքները» (1953), Ս. Մ. Գևորգյանի «Հղիության տորսիկողները, նրանց կինիկան և կանխարգելումը» (1946) և ուրիշներ:

Տեղին է խոսել Բ. Գ. Սայադյանի ծառայությունների մասին, որը հանդիսանալով Հայաստանում առաջին կոլխոզային ծննդատան կազմակերպիչը, մեծ դեր խաղաց նաև մանկաբարձական այդ օջախի նշանակության պրոպագանդայի գործում, հանգես գալով որպես այդ հարցի վերաբերյալ գրված կինոսցենարի հեղինակ:

Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգները, բժշկագիտության մյուս մասնաճյուղերի մասնագետների հետ մեկտեղ մեծ նշանակություն էին տալիս երկրամասային ախտաբանության հարցերի ուսումնասիրությանը: Հատկապես անհրաժեշտ է հիշատակել նախասովետական շրջանում և սովետական իշխանության առաջին տարիներին Հայաստանում մեծ տարածում ստացած մալարիայի վերաբերյալ աշխատանքները: Մանկաբարձական պրակտիկայում մալարիայի բարդությունների բացահայտման ուղղությամբ կատարված գիտահետազոտական աշխատանքները վերաբերում են դեռևս 20-ական թվականներին, սակայն նրանք հատկապես մեծ ծավալ ընդունեցին մանկաբարձության և գինեկոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի հիմնադրումից հետո:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մալարիան բացասաբար է անդրադառնում հղության ընթացքի ու ելքի վրա: Նրա հետևանքով հաճախ առաջ են գալիս վաղաժամ ծննդաբերու-

թյուններ և վիժուալներ, երկարում է ծննդաբերության ընթացքը, լինում է ծննդաբերական ուժերի թուլացում, ծննդաբերական ուղիների փափուկ հյուսվածքների պատովածք, արյունահոսությունների պահանջ է առաջանում, և ծնվում են ոչ լիարժեք երեխաներ: Մալարիայի և հղիության փոխարաբերության հարցերին են նվիրված Հայաստանի մանկաբարձ-դինեկողոգների կողմից պաշտպանված 2 դոկտորական և 3 թեկնածուական դիսերտացիաներ: Ուշադրության արժանի է, հատկապես, Մ. Լ. Ռենիգեր-Արեշյանի «Հղիությունը և մալարիան» (1944) դոկտորական դիսերտացիան: Այդ աշխատության մեջ ամփոփված և հանրագումարի են բերված ոչ միայն հեղինակի ուսումնասիրությունների արդյունքները, այլև Հայաստանում սովետական իշխանության տարիներին այդ ուղղությամբ կատարված աշխատանքները:

Մ. Լ. Ռենիգեր-Արեշյանի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մալարիայով հիվանդ հղիների մոտ նվազում է վիտամին «C» քանակը: «C» հիպովիտամինով դիտելով որպես հղիության ընդհատման գործուներից մեկը, նա մալարիայով բարդացած հղիության ժամանակ կարելոր տեղ է տալիս «C» վիտամինի փոխանակությանը: Հեղինակը միաժամանակ անհրաժեշտ է համարում մալարիայի ծանր ընթացող ձևերի և կենսական կարելոր օրգաններում ախտաբանական անվերադարձ փոփոխությունների առկայության դեպքում, ելնելով հղի կնոջ շահերից, ընդհատել հղիությունը:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Պ. Հ. Մարգարյանի «Մալարիայով հիվանդ հղիների և ծննդաբերների մոտ հանքային փոխանակությունը և կապիլլարոսկոպիական երևութները» դոկտորական դիսերտացիան (1952): Փաստացի հարուստ նյութի հիման վրա հեղինակը ցույց է տվել, որ հղիությունը և մալարիան ազդելով հղի կնոջ բոլոր օրգաններում կամակարգությունների վրա, գրանով իսկ խանգարում են նյութափոխանակությունը կարգավորող բոլոր մեխանիզմները: Նրա կողմից միաժամանակ հաստատվեց հանքային փոխանակության կապիլլարոսկոպիական երևութների բացահայտ խախտում⁴:

⁴ Маркарян П. А., Научно-исследовательская деятельность Института акушерства и гинекологии им. Н. К. Крупской Минздрава Арм. ССР за 35 лет со дня основания (1931—1966), Труды ин-та, Ереван, 1966, т. 4, стр. 22.

Նա միաժամանակ ցույց տվեց, որ մալարիան խիստ անբարենպաստ է ընթանում հղիության և ծննդաբերության ժամանակը ինչպես նաև հետօննդյան շրջանում:

Ապացուցված է, որ մալարիայի դեպքում նորածնի քաշը և հասակը լինում է նորմայից պակաս: Այդ առումով բացառիկ նշանակություն է ձեռք բերում մալարիայով հիվանդ հղիների պտղի ուսկրագոյացման երեսութիւ ուսումնասիրություն: Վերոհիշյալ հարցի մանրամասն ուսումնասիրությամբ Հայաստանում զբաղվել է Ս. Ա. Բիշարյանը (1947), Նրա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մալարիայի ժամանակ օրգանիզմի տարրեր օրգան-համակարգությունների ախտահարման հետ միաժամանակ, զգալի ախտաբանական փոփոխություններ են տեղի ունենում ոսկրա-աճառային համակարգում, որոնք բացասաբար են ազդում ոսկրագոյացման պրոցեսի վրա, արգելակելով ոսկրի աճման ընթացքը⁵: Հենց դրանով էլ բացատրվում է բնածին մալարիայի դեպքում հաճախակի հանդիպող ֆիզիկական տհասությունը: Լ. Ն. Բագատուրովայի աշխատանքներից պարզվում է, որ որքան մալարիան ծանր է ընթանում հղիների մոտ, այնքան մեծ ախտաբանական փոփոխություններ են լինում պտղի օրգաններում (1946):

Լ. Ա. Պողոսյանի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մալարիայով երկարատև հիվանդացման դեպքում նկատվում են հղիների ստամքասահյութի մեծ խանգարումներ: Անատոմիական կոպիտ փոփոխությունների է ենթարկվում ստամքսի պատը և հյութարտազատմանը զուգահեռ փոփոխություններ են կատարվում սակ շարժիչ գործունեության մեջ⁶: Ստամքսի հիվանդությունների կանխարգելման նպատակով, նա առաջարկում է մալարիայով հիվանդ հղիների բուժումը համակցել ուղղիոնալ սնուցման հետ:

Մրոշակի աշխատանքներ են կատարվել մալարիայի և հղիության կլինիկական ձևերի, նրանց ժամանակ պահանջվող անհրաժեշտ բուժական միջոցառումների (Գ. Հ. Արեգյան) և բնածին մալարիայի վերաբերյալ (Ն. Ա. Տեր-Հովհաննես, Պ. Հ. Մարգարյան, Լ. Ն. Բագատուրովա և ուրիշներ): Այդ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մալարիայով բարդացած հղիությունների

5 Բիշարյան Ս. Ա., Պտուղների օստեոգեննեղը մալարիայով բարդացած հղիության դեպքում, «Մանկաբարձության և զինեկոլոգիայի գ/հ ինստիտուտի աշխատությունների ժողովածուա, Երևան, 1952, էջ 87—94»:

6 Погосян Л. М., Моторная и секреторная функции при беременности, осложненной малярией, канд. диссертация, 1952.

ժամանակ տեղի են ունենում պտղի թաղանթների և ընկերքի ընդհանուր փոփոխություններ և արյունազեղումներ: Դեցիդուալ թաղանթում մալարիայի հետևանքով առաջացած փոփոխությունները ազդում են պտղի վրա, առաջ բերելով թթվածնային քաղց, իսկ այնուհետև թթվածնի լրիվ բացակայություն: Մալարիայի ժամանակ հղիների մոտ առաջ է գալիս հիպոխոլեստերինեմիա, հիպոֆիեմիա և փիպոիդ փոսֆորի քանակի պակաս (թ. 2. Հակոբչանյան):

Թ. Ա. Հակոբյանը մեծ նշանակություն էր տալիս պարբերաբար խոլեստերինի քանակի որոշմանը, որը հնարավորություն է ստեղծում գաղափար կազմելու հեպատո-լիենալ համակարգության խանգարման աստիճանի և կիրառված բուժման արդյունքի մասին:

Մալարիայով հիվանդ հղիների արյան շրջանառության արագությունը որոշելու նպատակով հաճախ օգտագործվում էր նիկոտինաթթու: Հակառակ մի շարք հեղինակների կարծիքի, որի համաձայն նիկոտինաթթուն տվյալ դեպքում անվնաս է, և. Պ. Մարգարյանի աշխատանքները ցույց տվեցին, որ այն կարող է առաջ բերել որոշ բարդություններ, այդ թվում՝ արգանդի մկանների կըծկում և թաքնված մալարիայի բուն զարգացում:

Հաշվի առնելով, որ ծայրամասային արյան մեջ տեղի ունեցող փոփոխությունները չեն համընկնում ոսկրածուծի փոփոխությունների հետ, Թ. Ս. Դրամբյանը մալարիայի ախտորոշման համար արժեքավոր եղանակ էր համարում մալարիայով հիվանդ հղիների ոսկրածուծային արյունաստեղծման ուսումնասիրությունը՝ ոսկրածուծի պունկտատի հետազոտման միջոցով:

Մալարիայի ուժեղ ինտոքսիկացիայի հետևանքով ախտահարվում է լյարդը և առաջանում է պրոտրոմբինային ֆրակցիայի խանգարում և վիտամին «Կ» քանակի իշեցում (Ա. Մ. Ավետիսյան): Նման դեպքերում, հիպոտրոմբինեմիան վերացնելու նպատակով, առաջարկվում էր հիվանդներին տալ վիկանոլ:

Հղիների մալարիայի բուժման ասպարեզում կիրառվող յուրօրինակ եղանակներից հիշատակության արժանի է փայծաղի դիէլեկտրոլիզը, որ երբեմն կիրառվում էր լյարդի կամ խողովակավոր ոսկրերի էպիֆիզի դիաֆերմիայի հետ համակցված (Ե. Ն.

7 Саядян Б. Г., Этиология мертворождаемости при преждевременных родах, «Труды Ереванского медицинского института», т. 10, 1959, стр. 353—360.

Արամելիք, Մ. Լ. Ուսնիգեր-Արեցյան, Ե. Ա. Մողնյան): Դիէ-
լեկտրոլիպի շնորհիվ հաջողվում էր իշեցնել հիվանդին տրվե-
լիք հակամալարիկ զեղանցութերի բանակը, միաժամանակ զգա-
թյուններ բարձրացնելով բուժիչ աղդեցությունը⁸: Առաջնասիրու-
ծննդյան շրջանում բրուցելողի աղդեցության բացահայտման ուղ-
ղությամբ: Այդ աշխատանքների ընթացքում պարզվել է, որ բրու-
ցելողով հիվանդների մոտ վիճումները և վաղաժամ ծննդաբերու-
թյունները լինում են ավելի հաճախ: Համարյա բոլոր հղիներին
բնորոշ են ներվային համակարգի ախտահարումները: Բրուցելողը
ընկերում առաջ է բերում բորբոքային և դիստրոֆիկ փոփոխու-
թյուններ, որոնք կարող են ներազդել պարզի դարձացման վրա: Չի
բացասվում նաև պարզի ներարգանդային վարակումը, եթե շտարվի
համապատասխան բուժում: Ելնելով վերոհիշյալից, անհրաժեշտ էր
համարվում հղիության ընթացքում ժամանակին ժեռնարկել համա-
պատասխան բուժում, որը նպաստում է բարդությունների նվազեց-
մանը և հղիության, ծննդաբերության ու հետծննդյան շրջանի ծանր
ընթացքի թերևացմանը⁹:

Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգների ուշադրության կենտ-
րոնում էին գտնվում մոր և մանկան մահացության հարցերը:
Այդ ասպարեզում կատարված գիտահետազոտական աշխատանք-
ները հետազնդում էին հիմնականում մի նպատակ՝ որքան կարե-
լի է իշեցնել հղիության, ծննդաբերության և հետծննդյան բարդու-
թյունների հետևանքով մոր և մանկան մահացությունների թիվը:
Բ. Գ. Սայադյանը անտեսատալ մահացության իշեցման գործում
մեծ նշանակություն է տալիս վաղաժամ ծննդաբերությունների
կանխարգելմանը, բժիշկների ուշադրությունը հրավիրելով մահա-
ցության պատճառ հանդիսացող հիվանդությունների (տոքսոլազ-
մոզ, լիստերելոզ, բրուցելոզ, սուր վարակիչ հիվանդություններ)՝
վրա: Ելնելով իր բազմամյա փորձից, նա առաջարկում էր հղիու-
թյան առաջին ամիսներից սկսած անցկացնել թերապևտի, նյար-
դախտաբանի, վիրաբույժի և էնդոկրինոլոգի կոնսուլտացիաները¹⁰:

⁸ Աճամելիկ Ե. Ի., Ռենիգեր-Արեցյան Մ. Լ., Մօղնյան Ե. Ա., Լечение маля-
рии у беременных и в послеродовом периоде диэлектролизом, «Труды II
Закавказского съезда акушер-гинекологов», Ереван, 1937, стр. 322—327.

⁹ Արակելյան Բ. Ի., Վлияние бруцеллезной инфекции на беременность,
плод и послеродовой период, «Труды Института акушерства и гинекологии»,
Ереван, 1966, т. 4, стр. 155—158.

¹⁰ Սայադյան Բ. Գ., Հայկական ՍՍՀ-ում կանանց կոնսուլտացիաների գոր-

Պերինատալ մահացության ուսումնասիրությամբ են զբաղվել
Բ. Գ. Սայադյանը, Ս. Ա. Թիշարյանը, Մ. Լ. Խաչատրյանը և ու-
րիշներ:

Այդ ուղղությամբ կատարված աշխատանքներից ուշադրու-
թյան արժանի են հատկապես Մ. Լ. Խաչատրյանի ուսումնասի-
րությունները: Ենելով կլինիկական մեծաքանակ նյութերի տվյալ-
ներից, նա պերինատալ մահացության պատճառների շարքում
որոշակի տեղ էր տալիս պտղի շնչահեղձությանը, ծննդաբերական
տրավմաներին, ներարգանդային զարգացման արատներին և
վարակիչ հիվանդություններին: Այդ աշխատանքները միաժամա-
նակ ցույց տվին, որ որքան պտղի քաշը մոտենում է նորմային,
այնքան իջնում է պերինատալ մահացության հաճախականու-
թյունը¹¹:

Հարց էր առաջ քաշվում կանանց խոշոր կոնսուլտացիաներում
ունենալ հատուկ կարինետ, որը զբաղվի անհասների և բարդացած
մանկաբարձական անամնեզ ունեցող հղիների հետազոտմամբ:
Միաժամանակ անհրաժեշտ էր համարվում ծննդատներում կազ-
մակերպել հղիության ախտաբանության բաժանմունք կամ պա-
լատ: Մանկաբարձական ախտաբանության մեջ որոշակի դեր ունեն
նաև ծննդաբերական տրավմաները: Ուսումնասիրությունները
ցույց են տվել, որ այդ տրավմաների հիմնական պատճառները
հանդիսանում են ձգձգվող ընթացք ունեցող շրո ծննդաբերու-
թյունները, ծննդաբերական գործունեության թուլությունը, նեղ
կոնքը, խոշոր պտուղը, հետույքային և տոտիկային առաջադրու-
թյունները և այլն: Ծննդաբերական տրավմաների կանխարգելման
նպատակով առաջարկվում էր հղիների վաղաժամ հաշվառում կոն-
սուլտացիաներում, իսկ անհրաժեշտ դեպքում՝ հոսպիտալիզացիա:

Որոշակի ուշադրության է արժանացել նաև վաղաժամ ծննդա-
բերությունների հարցը: Պարզվել է, որ վաղաժամ ծննդաբերու-
թյունների դեպքում բարենպատ պայմաններ ստեղծելով, կարելի
է պահպանել նորածնի կյանքը, որով հնարավորություն կստեղծվի
իշեցնելու մահացության տոկոսը: Նկարագրված է նույնիսկ վեց-
ամսյա պտղի կենսունակության հազվագյուտ դեպք:

Ուսումնասիրելով վաղաժամ ծննդաբերության պատճառագի-

Ժունեությունը պտղի անտենատալ պահպանության ուղղությամբ, «Բժշկական գի-
տական տեղեկատու», Երևան, 1965, № 1, էջ 160:

11 Խաչատրյան Մ. Լ., Պերինատալ մահացությունը Հայաստանի մանկա-
բարձագինեկողիկական ինստիտուտի տվյալներով և միջոցառումներ նրա իշեց-
ման համար, թեկն. դիսերտացիա, 1966:

տության և կանխարգելման հարցերը, թ. Գ. Սայադյանը գալիս է այն համոզման, որ կանխարգելման միջոցառումների պետք է դիբ-մել հղիության ախտորոշումից անմիջապես հետո: Հղիության վա-ղաժամ ընդհատման կանխարգելման գործում նա անհրաժեշտ տեղ էր տալիս մոր և պտղաձվի հիվանդությունների խորը և մանրա-կըրկիտ ուսումնասիրմանը, ինչպես նաև ժամանակին ձեռնարկ-վող անհրաժեշտ միջոցառումներին¹²:

Հակառակ սպասածին, նրա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վաղաժամ ծննդաբերության դեպքում տրավմատիկ դեպքերը ավելի հաճախ են լինում, քան նորմալ ծննդաբերության: Ամփոփելով իր ուսումնասիրությունների արդյունքները, թ. Գ. Սայդյանը 1960 թ. պաշտպանեց զոկուրական դիսերտացիա՝ «Վա-ղաժամ ծննդաբերությունների պատճառագիտությունը և կլինի-կան» թեմայով:

Վ. Ա. Բուգայյանի աշխատանքներից պարզվել է, որ հարի-տուալ վիճումներ և կրկնվող վաղաժամ ծննդաբերություններ ու-նեցող հղիների անոթային ունակցիան ընկած է: Հեղինակը այդ հանգամանքը բացատրում է ուղեղի կեղեղի արգելակման վիճա-կում գտնվելու և դրա պատճառով դեպի շրջակա գրգիռները ոչ ակախվ մասնակցություն ունենալու հետևանքով: Մանկաբարձ-կան պրակտիկայում զգալի դեր ունի հղիության տոքսիկոզների դեմ տարվող պայքարը: Այդ ասպարեզում ուշադրության արժա-նի աշխատանքներ են կատարվել թ. Գ. Սայադյանի, Ն. Հ. Մելիք-Ալավերդյանի, Թ. Ս. Դրամբյանի, Ս. Մ. Գևորգյանի, Ե. Ա. Մողն-յանի և ուրիշների կողմից:

Հետազոտություններից պարզվել են, որ հղիության տոքսի-կոզների ժամանակ մեռնելածնության կանխարգելման, ինչպես նաև մոր մոտ առաջացած բարբությունների կանխման նպատակով դեղորայքային բուժման հետ միաժամանակ անհրաժեշտ է վիտա-մինային և թթվածնային բուժում, բուժական ֆիզկուլտուրա և ծննդաբերության փսիխոպրօֆիլակտիկ նախապատրաստում¹³:

Հղիների նեֆրոպատիայի ժամանակ մի շարք մանկաբարձնե-րի կողմից հաճախ կիրառվում է ալսպես կոչված բուժում «քաղ-

12 Саядян Б. Г., Этиология и профилактика преждевременных родов, «Труды Ереванского медицинского института», 1962, т. 12, стр. 353—360.

13 Մելիք-Ալավերդյան Ն. Հ., Պերինատալ մանգությունը հղիության տոք-սիկոզների դեպքում և նրա պրոֆիլակտիկան, «Բժշկական գիտական տեղեկատու», Երևան, 1965, № 2, էջ 153:

ցով և ծարավովվայ: Սակայն ուսումնասիրությունները ապացուցեցին, որ նման մոտեցումը խանգարում է սպիտակուցների սինթեզին, որի հետևանքով էլ զարգանում է հիպոպրոտեիննեմիա¹⁴: Հղիության տոքսիկոզների ժամանակ տեղի է ունենում լյարդի անտիտոքսիկ, սպիտակուցային, պրոթրոմբինային և ածխաջրատային ֆունկցիաների խանգարում: Ուսումնասիրությունները ցույց տվին, որ նրանց որոշումը կլինիկական և լաբորատոր մյուս հետազոտությունների հետ ունի ախտորոշիչ և կանխորոշիչ նշանակություն¹⁵:

Ուսումնասիրություններ են կատարվել նաև արտարգանդային հղության վերաբերյալ: Դեռևս 1930 թ. Վ. Ա. Բուդաշյանը նկարագրել է որովայնային արտարգանդային հղության մի դեպք, հասուն կենդանի պտղով, որը հագվաղեալ երևուցիթ է: Հայ մանկարձ-գինեկողոգների՝ ախտորոշման մեթոդների ինչպես և վիրահատման տեխնիկայի մեջ կատարելագործվելու շնորհիվ, սովորական իշխանության տարիներին, հատկապես վերջին տասնամյակներում, արտարգանդային հղության հետևանքով տեղի ունեցող մահվան դեպքերի թիվը Հայաստանում զգալիորեն նվազել է:

Մանկաբարձական պրակտիկայում քիչ նշանակություն չունի նաև կեսարյան հատումը։ Այդ ասպարեզում անհրաժեշտ է նշել Ա. Մ. Ահարոնովի և Պ. Հ. Մարգարյանի աշխատանքները։ Երկարամյա կլինիկական դիտարկումները ցույց տվին, որ լավագույն մեթոդը հանդիսանում է հետմիզապարկային տրանսպերիտոնեալ կեսարյան հատումը, որի ժամանակ կնոջ ամլություն չի առաջանում և քիչ բարդություններ են լինում։ Ա. Մ. Ահարոնովը մարմային տրանսպերիտոնեալ կեսարյան հատումը թույլատրեելի էր համարում մոր, իսկ ավելի սակավ, պտղի կողմից շտապ ցուց-
ում է անհնարինությունը՝ դեպքում¹⁶,

Կեսարյան հատման մեթոդը կենտրոնական, կողմնային և վզիկային առաջադիր ընկերքի դեպքում համարվում էր ամենա-

¹⁴ Могнян Е. А., Чхиквадзе Р. А., Содержание аминокислот в крови и моче здоровых беременных и больных токсикозами, «Труды Ереванского медицинского института», 1960, в. II, стр. 317—322.

15 Գեղրզան Ս. Մ., Լյարդի Փոնկցիոնալ կացությունը Հպիոթյան տոքսիկոլ-ների ժամանակ, թեկն. գիտերացիա, 1962:

16 Агаронов А. М. Современные методы производства операции кесарева сечения, «Труды Ереванского медицинского института», 1960, в. II, стр. 305—309.

ուացիոնալ մեթոդը, որը հնարավորություն է տալիս արագացնել ծննդաբերությունը, դադարեցնել արյունահոսությունը և փրկել մորու մանկան կյանքը:

Ս. Ա. Ալեքսանյանի կողմից ուշադրության արժանի աշխատանքներ են կատարվել մանկաբարձական աքցաններ դնելու և նրանց մոտակա ու հեռավոր արդյունքների վերաբերյալ Քիչ ուսումնասիրություններ չեն կատարվել նաև նվիրված հետօննդյան շրջանին: Դրանցից առավել արժեքավոր է Բ. Գ. Սայադյանի «Հետօննդյան շրջանի վարումը և թերապիան» թեկնածուական դիշաբարտացիան (1940):

Լ. Պ. Մարգարյանի և է. Ս. Հովակիմյանի աշխատանքները ցույց են տվել, որ ծննդաբերական արյունահոսություններ հաճախ լինում են ընկերքային և վաղ հետօննդյան շրջանում, որոնց պատճառոր հիմնականում արգանդի կրծատման ունակության և արյան մակարդման սիստեմի խանգարումներն են: Ծննդաբերական արյունահոսությունների վերաբերյալ աշխատանքներ են կատարել նաև Ա. Կ. Դրամբյանը, Տ. Գ. Ղազարյանը և ուրիշներ: Մանկաբարձական պրակտիկայում զգալի դեր ունի ցավազրկման պրոբլեմը: Այդ ասպարենում կատարված աշխատանքներից անհրաժեշտ է նշել Պ. Հ. Մարգարյանի ուսումնասիրությունները: Նրա կողմից մշակվել է ծննդաբերության ցավազրկման հատուկ եղանակ, որը անվճակ է մոր և պտղի համար: Հեղինակը օգտագործում էր նովոկաինի կաթնա-հիմնային լուծույթը Հեղի գոտիների և շերի շրջանը ներարկելու միջոցով¹⁷:

Որոշակի աշխատանքներ են կատարվել նաև ծննդաբերության փսիխոպրոֆիլակտիկ նախապատրաստման ուղղությամբ (Վ. Ա. Բուդալյան, Ն. Հ. Մելիք-Ալավերդյան, Լ. Պ. Մարգարյան և ուրիշներ): Այդ աշխատանքներից հիշատակության արժանի են հատկապես Լ. Պ. Մարգարյանի ուսումնասիրությունները: Հաշվի առնելով, որ Հայաստանում մանկաբարձության և գինեկոլոգիայի բնագավառում փսիխոթերապիայով բոլորովին չեն զբաղվում, նա փորձում է հիպնոտիկ անցավացումը և հիպնոթերապիան ներմուծել և արմատավորել հանրապետության մանկաբարձա-գինեկոլոգիական պրակտիկայում: Իր ուսումնասիրությունների արդյունքներից ելնելով, նա փսիխոպրոֆիլակտիկ մեթոդը համարում է ծննդաբերության ցավազրկման լավագույն մեթոդ, իսկ հղիու-

17 Оганесян Л. А., История медицины в Армении, Ереван, 1947, т. 5, стр. 653.

թյան անզուսազ փսխումների դեպքում, բուժման արժեքավոր, երբեմն էլ միակ արդյունավետ մեթոդը: Նա միաժամանակ հիպնոզը համարում էր հրաշալի անցավացնող միջոց արհեստական վիճումների դեպքում¹⁸:

Եներով վերոհիշյալից, առաջարկվում էր Սովետական Միության մի շարք քաղաքների օրինակով պատրաստել համապատասխան կադրեր և փսխոպրոֆիլակտիկ, հիպնոտիկ անցավացման ու հիպնոթերապիայի մեթոդները արմատավորել հանրապետության մանկաբարձագինեկոլոգիական հիմնարկներում:

Ուշադրության է արժանացել շնչահեղձության վիճակում գտնվող նորածինների վերակենդանացման հարցը (Ա. Մ. Ահարոնով, Ն. Ի. Մելիք-Ալավերդյան, Մ. Լ. Խաչատրյան և ուրիշներ): Ա. Մ. Ահարոնովը, Վ. Ն. Սոկոլովի հետ մշակել է նորածինների վերակենդանացման նոր եղանակ, որը արժանացել է մասնագետների բարձր գնահատականին և ՍՍՀՄ առողջապահության մինիստրության կողմից առաջարկվել է պրակտիկ կիրառման:

Հիշատակության արժանի աշխատանքներ են կատարվել նաև վիժումների և հետծննդյան շրջանի հիվանդությունների վերաբերյալ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վարակը արգանդի խոռոչով սահմանափակված վիժումների դեպքում քերումն ավելի լավ արդյունք է տալիս, քան կոնսերվատիվը (դեղորայքային, ոչ վիրահատական) բուժումը, իսկ երբ վարակն անցել է արգանդի սահմաններից դուրս, ավելի լավ արդյունքներ ստացվում են բուժման կոնսերվատիվ մեթոդից (Ս. Ա. Բիշարյան):

Բազմազան է հետծննդյան հիվանդությունների կլինիկան, որը կախված է հիվանդության տեղադրումից, միկրոօրգանիզմների տեսակից, կայունությունից, օրգանիզմի դիմադրողականությունից և այլ գործուններից: Այդ ասպարեզում ևս կատարվել են զգալի աշխատանքներ (Մ. Լ. Ռենիգեր-Արեշլյան, Ս. Ա. Բիշարյան, Թ. Ս. Դրամբյան, Թ. Ա. Հակոբյան և ուրիշներ):

Ուշադրության արժանի է հատկապես Թ. Ս. Դրամբյանի «Ունկրածուծային արյունաստեղծությունը հետծննդյան և հետվիժման սեպտիկ հիվանդների մոտ» աշխատությունը (1962): Հեղինակի

18 Մարգարյան Լ. Պ., Ցավազրկման պսխոպրոֆիլակտիկ մեթոդը, հիպնոթերապիան և հիպնոտիկ անցավացումը մանկաբարձության և գինեկոլոգիայի մեջ, «Մանկաբարձության և գինեկոլոգիայի գ/հ ինստիտուտի աշխատությունների ժողովածուա, Երևան, 1952, էջ 113—123:

մանրակրկիտ ուսումնասիրությունները ցուց տվին, որ վերոհիշեց-
յալ հիվանդների մոտ ծայրամասային արյան և ուկրածուծի մեջ
սեպտիկ ինտոքսիկացիայի ազդեցության ներքո առաջ են գալիս
նշանակալից փոփոխություններ, որոնք արտահայտվում են էրի-
թրո և միելոպոեզի խանգարումներով, ինչպես նաև սակավարյու-
նությամբ։ Հեղինակը գործնական մեծ նշանակություն է տալիս
հիվանդության կանխորշման և բուժման գործում ոսկրածուծի
պունկտատի հետազոտմանը¹⁹։

Ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում նաև Ե. Ա.
Մողնյանի «Վիտամին «C» փոխանակությունը հետծննդյան վա-
րակական հիվանդությունների ժամանակ» աշխատությունը (1946),
Ուսումնասիրությունները բացահայտել են, որ վերոհիշյալ հիվան-
դությունների ժամանակ օրգանիզմը գտնվում է «C» հիպովիտա-
մինովի դրության մեջ, ընդ որում, տեղական պրոցեսների ժամա-
նակ հիպովիտամինովը շափավոր է, իսկ ընդհանուրի դեպքում՝
ավելի խիստ արտահայտված։ Հեղինակի ուսումնասիրությունները
միաժամանակ ցուց տվին, որ օրգանիզմում վիտամին «C» քա-
նակի բարձրացման հետ, մեծանում է հետծննդյան սեպտիկ հի-
վանդությունների բուժման տարրեր մեթոդների արդյունավետու-
թյունը²⁰։

Սննդկանների կրծքապտուկների ճեղքվածքների և կրծքագեղ-
ձերի բորբոքումների կանխարգելման ու բուժման հարցերով են
զբաղվել Ա. Պ. Կազարովը, Զ. Ա. Հակոբյանը և ուրիշներ։ Հետա-
քրքրի է նշել, որ Ա. Ե. Բունիաթյանի և Ա. Կ. Ղուկասյանի ու-
սումնասիրությունները ցուց են տվել, որ կրծքապտուկների ճեղք-
վածքների բուժման զանազան միջոցներից լավագույն արդյունք-
ներ ստացվում են մեղրամուի և կարագի քսուկի գործադրման մե-
թոդից²¹։ Ուշադրության արժանի է հատկապես Զ. Ա. Հակոբյանի
«Սննդկանների կրծքապտուկների ճեղքվածքների ու մաստիտների
կանխարգելման ու բուժման որոշ հարցեր» աշխատությունը (1962), որտեղ հիվանդության կանխարգելման գործում մեծ

19 Գրամբյան Թ. Ա., Ոսկրածուծային արյունաստեղծությունը հետծննդյան և
հետվիժման սեպտիկ հիվանդների մոտ, թեկն. դիսերտացիա, 1962։

20 Մօղնյան Ե. Ա., Օբмен վիտամին «C» պահանջման առողջապահության առողջապահության մեջ առաջարկությունների մասին որոշում, 1946։

21 Բոենքարյան Ա. Ե., Ղուկասյան Ա. Կ., Կրծքապտուկների ճեղքվածքների
բուժման զանազան մեթոդների համեմատական զնահատականը, «Մանկարա-
ձության և զինեկողոզիայի գ/հ ինստիտուտի աշխատությունների ժողովածու»,
1952, էջ 125—129։

տեղ է տրվում կաթ կթելու հարմարանքներին: Ա. Պ. Կազարովը և Զ. Ա. Հակոբյանը, գրադպելով այդ հարցերով, կոնստրուկցիայի են ենթարկել կաթ կթելու և կրծքապտուկները դուրս քաշող նոր հարմարանքներ, որոնք հաջողությամբ կիրառվում են մանկաբարձական պրակտիկայում²²:

Վերջին 10-ամյակում հանրապետության մանկաբարձագինեկոլոգիական հիմնարկներում մեծ շափով կիրառվում է արյան փոխներարկումը, որն իր արտացոլումն է գտել բազմաթիվ դիտական աշխատություններում (Ա. Մ. Ահարոնով, Պ. Հ. Մարգարյան, Ս. Ա. Բիշարյան, Վ. Ա. Բուդալյան, Ն. Ի. Մելիք-Ալվերդյան, Ա. Ա. Գրիգորյան, Թ. Ա. Հակոբյան) և ուրիշներ):

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արյան և նրա բաղադրիչ մասերի ներարկումը խիստ նվազեցնում է ծննդկանների և գինեկոլոգիական հիվանդների մահացությունը և հիվանդությունները: Խորհուրդ էր տրվում ներարգանդային յուրաքանչյուր միջամտություն կատարել արյան ներարկման ուղեկցությամբ: Ուսումնասիրություններից պարզվել է, որ արգանդի ուռուցքով տառապողների մոտ արյունահոսության հետևանքով առաջացած սակավարյունության դեպքում արյան ներարկումը բարելավում է հետօքերացիոն ընթացքը²³: Ուշադրության արժանի կլինիկական ու փորձարարական աշխատանքներ են կատարվել, որոնք բացահայտել են թիմուսի և մակերիկամի կեղեկի դերը արգանդի զարգացման գործում և մակերիկամի կեղեկի հորմոնի ազդեցությունը հղիության ընթացքի վրա:

Ա. Մ. Ահարոնովի ուսումնասիրությունները ցույց տվին, որ թիմուսը արգանդի և արտաքին սեռական օրգանների զարգացման վրա ունենում է արգելակող ազդեցություն: Արգանդի զարգացումը հետ է մնում նաև մակերիկամների կեղեկի անբավարության դեպքում: Նրա աշխատանքները միաժամանակ ցույց տվին, որ վարակական ծանր հիվանդությունների ժամանակ թիմուսում և մակերիկամներում տեղի ունեցող փոփոխությունները, ինչպես նաև մանկական հասակում տարած քաղցր, առաջ են բերում արգանդի զարգացման խանգարում կամ լրիվ կանդ:

22 Акопян Д. А., Некоторые вопросы профилактики и лечения трещин грудных сосков и маститов у родильниц, кандидатская диссертация, 1962.

23 Агаронов А. М., Переливание крови и ее компонентов в акушерстве и гинекологии, «Сборник научных трудов Арм. института переливания крови», Ереван, 1959, № 7—8, стр. 28—34.

1940թ. Ա. Մ. Ահարոնովը ամփոփելով այդ ասպարեզում իր կատարած աշխատանքները, պաշտպանեց գոկտորական դիսերտացիա, իսկ այնուհետև՝ «Արգանդի զարգացման վրա թիմուսի և մակերիկամների կեղեկի աղղեցությունը» վերնագրով հրատարակեց մենագրություն, որն արժանացավ մասնագետների բարձր գնահատականին։ Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Ա. Ա. Պետրովայի աշխատանքները մակերիկամների կեղեկի հորմոնի միջոցով հղիության անհասության բուժման վերաբերյալ։ Այդ ուսումնասիրությունները պարզեցին, որ հորմոնալ բուժումը տալիս է դրական արդյունք և բացասարար չի անդրադառնում հղիկնոց ու պտղի վրա²⁴։

Լ. Պ. Մարգարյանի փորձարարական աշխատանքները, որոնք վերաբերում էին սեռական ֆունկցիայի հասունացման մեխանիզմում ուղեղիկի դերին, ցույց տվին, որ ուղեղիկի հեռացումը հանգեցնում է սեռական ֆունկցիայի զարգացման կանգի, սեռական օրգանների թերաճի և կենդանու լրիվ ամլության։ Կլինիկական փորձարկման են դրվել մի շարք դեղանյութեր, այդ թվում Հայկ. ՍՍՀ ԳԱ Նուբր օրգանական թիմիայի դիտահետազոտական ինստիտուտում սինթեզված ֆուլբրոմեգանը, որը մեծացնում է արգանդի մկանի կծկման ամպլիտուդան, բարձրացնում տոնուաը և նպաստում արգանդի կրծատմանը։ Հաշվի առնելով վերոհիշյալը, Գ. Գ. Օկոնը առաջարկում էր արգանդի մկանների կծկման ունակության անկման դեպքում ֆուլբրոմեգանը օգտագործել որպես խթանող միջոց²⁵։

Խշակես բժշկագիտության մյուս մասնաճյուղերում, այնպես էլ մանկաբարձության և գինեկոլոգիայի մեջ վերջին տարիներին մեծ կիրառում են ստացել անտիբիոտիկները։ Վ. Ա. Խաչատրյանը ուսումնասիրելով անտիբիոտիկների ներորովայնային կիրառման միջոցով գինեկոլոգիական վիրահատությունների հետօպերացիոն շրջանի բարդությունների կանխման հարցերը, ցույց տվեց, որ գինեկոլոգիական վիրահատությունների դեպքում, նրա հետացվում է հիվանդի արգանդը հավելումների հետ միասին, պենիցիլինի և ստրեպտոմիցինի ներորովայնային, կանխարգելի կիրառումը կան-

24 Пегрова И. А., Лечение недонашивания беременности гормоном коры надпочечника, канд. диссертация, 1961.

25 Окоев Г. Г. Влияние фубромегана на сократительную функцию мускулатуры матки, «Труды Ин-та акушерства и гинекологии», Ереван, 1966, т. IV, стр. 237—240.

խում է հետօպերացիոն շրջանում առաջացող բարդությունները: Հեղինակը իր աշխատանքների ընթացքում հանգում է այն եղանակացության, որ հետօպերացիոն շրջանում անտիբիոտիկներ պետք է կիրառել միայն այն դեպքում, երբ նկատվում են որևէ բարդության առաջացման նշաններ²⁶:

Հղիությունը համարյա միշտ բացասարար է անդրադառնում օրգանիզմում եղած սուբերկուլոզային պրոցեսի վրա: Ենելով վերոհիշյալից, Ա. Մ. Ահարոնովը անհրաժեշտ էր համարում թոքերում կավերնայի առկայության դեպքում հղիությունը ընդհատել որքան կարելի է շուտ, քանի որ վիժուալը ուշ շրջանում կամ վաղաժամ ծննդաբերությունը հաճախ ավելի են ծանրացնում թոքերում ընթացող ախտաբանական պրոցեսները²⁷:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Վ. Ա. Բուղաղյանի ուսումնասիրությունները, նվիրված արգանդի և հեշտոցի պատերի արտաանկման պատճառագիտությանը և վիրահատական բուժմանը (1937): Այդ աշխատանքները ցույց են տվել, որ արգանդի և հեշտոցի պատերի արտաանկման պատճառը մի շարք գործոնների ընդհանրությունն է, որտեղ գերակռում է տվյալ գործոններից որևէ մեկը: Հեղինակը մեծ տեղ է տալիս հիվանդության կանխարգելման հարցերին, հատկապես կնոջ առողջության ամրապնդմանը, ոսկրային և մկանային հյուսվածքների զարգացմանը, կոնքի հատակի ամրապնդմանը²⁸:

Հայ մանկաբարձ-գիննեկոլոգները զգալի աշխատանք են կատարել նաև կանանց սեռական օրգանների ուսուցքների ուսումնասիրման և բուժման ուղղությամբ: Ուշադրության արժանի են Ա. Մ. Ահարոնովի, Մ. Լ. Ռենիգեր-Արեցյանի, Վ. Ա. Ամատունու, Պ. Հ. Մարգարյանի, Ն. Մ. Ալլամազյանի և ուրիշների աշխատանքները, որոնք վերաբերում են ինչպես բարորակ, այնպես էլ շարորակ ուսուցքներին:

Ա. Մ. Ահարոնովը այդ հարցերի վերաբերյալ գրել է մի շարք աշխատություններ, իսկ ն. Մ. Ալլամազյանը՝ «Որոշ կանոնակա-

26 Խաշատրյան Վ. Ա., Գիննեկոլոգիական վիրահատությունների հետօպերացիոն շրջանի բարդությունների կանխումը անտիբիոտիկների ներորովայնային կիրառման միջոցով, Թեզն. դիսերտացիա, 1960.

27 Агаронов А. М. Туберкулез и беременность, «Груды I Закавказского съезда гинекол. и акушеров», Тбилиси, 1931, стр. 49—57.

28 Будагян В. А., К этиологии и оперативному лечению выпадения матки и влагалища, «Труды II закавказск. съезда гинекол. и акушеров», Ереван, 1937, стр. 200—204.

ձեսքանական տվյալներ արգանդի պարանոցի քաղցկեղի մասին և էքսպերիմենտում ուսուցքների վրա հակահալուրոնիդազային միջոցների նշանակությունը՝ գոկտորական դիսերտացիան (1964):

Կանանց սեռական օրգանների վրա վնասակար աղղեցություն են ունենում կոլտնտեսությունում և արտադրության մեջ տեղ գտած որոշ անբարենպաստ պայմաններ, որոնց ուսումնասիրման և կանխարգելման միջոցառումների մշակման առաջնազում էլ կատարվել են մի շարք հետազոտական աշխատանքներ:

Առանձնապես պետք է նշել Պ. Հ. Մարգարյանի ղեկավարությամբ Մանկաբարձության և գինեկոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի աշխատակիցների կողմից կատարված ուսումնասիրությունները՝ կնոջ աշխատանքային հիգիենայի և արտադրության հետ կապված՝ պրոֆեսիոնալ հիվանդությունների վերաբերյալ: Հետաքրքիր աշխատանքներ են կատարվել Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանի, Կիրովականի քիմիական կոմբինատի, Լենինականի տեքստիլ կոմբինատի և հանրապետության արդյունաբերության այլ օջախներում աշխատող կանանց շրջանում:

Մ. Ս. Մարտիկյանը, գրադիվելով լենինականի տեքստիլ կոմբինատի բանվորութինների մոտ գինեկոլոգիական հիվանդությունների ուսումնասիրությամբ, մշակում է համապատասխան միջոցառումներ նրանց իջեցման համար, ընդ որում, մեծ տեղ է տալիս աղմուկի դեմ պայքարին, օդափոխիչ սարքավորումների ուժեղացմանը, կարձատե հանգստի, կերակրող մայրերի և հղիների համար հատուկ սենյակների կազմակերպմանը²⁹:

Քլորոպրենային խրոնիկական թունավորման ժամանակ էստրալ ցիկլի և ձվարանների կառուցվածքի վերաբերյալ փորձառական աշխատանքներ են կատարվել Ն. Հ. Մելիք-Ալավերդյանի կողմից (1965): Անհրաժեշտ է նշել, որ այդ աշխատանքների ընթացքում նրան հաջողվում է մշակել պրոեկցիոն կինոապարատի օգնությամբ ձվարանի դեղին մարմնիկների բացարձակ քանակի անսխալ հաշվման մեթոդ:

Մանկաբարձա-գինեկոլոգիական պրակտիկայում զգալի դեր ունեն սեռական օրգանների բորբոքային հիվանդությունները և նրանց դեմ տարվող պայքարը: Վերոհիշյալ հիվանդությունների բուժման դորժում ֆիզիկական մեթոդների և առողջարանային գործոնների դերի բացահայտման ուղղությամբ Հայաստանում

29 Մարտիկյան Մ. Ս., Գինեկոլոգիական հիվանդությունները լենինականի տեքստիլ կոմբինատի բանվորութինների մոտ և միջոցառումներ նրանց իջեցման համար, թեկն. դիսերտացիա, 1961:

աշխատանքներ են կատարվել դեռևս 30-ական թվականներին։ Վ. Խ. Աղեկյանը առաջինն է զբաղվել Զերմուկ առողջարանում գինեկոլոգիական տարրեր հիվանդություններով տառապող հիվանդների բուժման արդյունքների վերլուծությամբ և ցուց տվել, որ ամենալավ արդյունքը ստացվում է բորբռքային հիվանդությունների դեպքում։

Հետագայում այդ հարցը մանրամասն ուսումնասիրում է Ա. Մ. Ավետիսյանը և ռԿանանց սեռական օրգանների բորբռքային հիվանդությունների բուժումը Զերմուկ առողջարանում՝ թեմայով գրում թեկնածուական դիսերտացիա (1962)։ Այդ աշխատանքները ցույց են տալիս, որ Զերմուկի բուժական գործոնների կոմպլեքսային ազդեցությունը կարգավորում է փոքր կոնքի օչախա-անատոմիական դրությունը և ձվարանային ֆունկցիան։ Ներծծվում են ինֆիլտրատիվ-կապումնային պրոցեսները, վերանում ցավերը, իսկ կլինիկայի պայմաններում Զերմուկի շշային ջրով բալնեո-պրոցեդուրաների կիրառման ժամանակ ստացված արդյունքները բիլ են զիշում առողջարանային կոմպլեքսային բուժման ընթացքում ստացված տվյալներին³⁰։

Մանկաբարձության և գինեկոլոգիայի ասպարեզում չկա քիչ թե շատ կարեւոր նշանակություն ունեցող մի հարց, որը ուսումնամիրության առարկա դարձած շինի Հայաստանում։ Սովետական իշխանության տարիներին Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգները հասել են զգալի հաջողությունների, նրանց կատարած գիտահետազոտական աշխատանքները հիմնականում ելնելով մանկաբարձության և գինեկոլոգիայի պրակտիկ պահանջներից, շատ բանով նպաստեցին մոր և մանկան առողջության պահպանմանը, ինչպես նաև Հայաստանում մանկաբարձա-գինեկոլոգիական գիտության աննախընթաց վերելքին։

В. М. МАРТИРОСЯН

ДОСТИЖЕНИЯ АКУШЕРСКО-ГИНЕКОЛОГИЧЕСКОЙ НАУКИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Р е з ю м е

В развитии акушерства и гинекологии в Армении коренной перелом произошел за годы Советской власти.

³⁰ Ավետիսյան Ա. Մ., Կանանց սեռական օրգանների բորբռքային հիվանդությունների բուժումը Զերմուկ առողջարանում, թեկն. դիսերտացիա, 1962։

В 1923 г. под руководством Г. А. Арещяна при медицинском факультете Ереванского государственного университета была создана кафедра акушерства и гинекологии, а в 1931 г. на ее базе Научно-исследовательский институт акушерства и гинекологии, ставший центром научно-организационной и методической помощи по акушерству и гинекологии.

Если в 1920 г. в Армении было всего один акушер-гинеколог и трое акушерок, то в 1965 г. число акушер-гинекологов достигло 396, а акушерок—2345.

За годы Советской власти более 30 акушер-гинекологов защитили диссертации, из них 5—докторских.

В развитии акушерско-гинекологической науки в Армении велики заслуги Г. Я. Арещяна, А. М. Агаронова, М. Л. Ренигер-Арещяни, П. А. Маркаряна, Б. Г. Саядяна, Н. М. Айламазяна и др.

Научно-исследовательским институтом, кафедрами и научным обществом акушер-гинекологов республики проделана огромная работа. Особый интерес проявлен к изучению краевых заболеваний, злокачественных новообразований, оперативному акушерству и гинекологии.

Много трудов посвящено малярии, которая была распространена в республике и вызывала большие осложнения во время беременности, родов и в послеродовом периоде.

Большое внимание уделено изучению вопросов гигиены труда женщин и профессиональных заболеваний, связанных с производством. Исследования в этой области позволили рекомендовать соответствующие лечебно-профилактические мероприятия для снижения процента гинекологической заболеваемости работниц крупных промышленных предприятий республики.

Немало сделано и в области изучения, предупреждения и лечения родового травматизма, токсикозов беременности и воспалительных заболеваний женских половых органов.

В акушерско-гинекологических учреждениях республики большое применение получило переливание крови и ее компонентов, а также применение антибиотиков, гормональных препаратов.

Акушер-гинекологами республики написаны учебные пособия и ценные монографии. Они выступили с многими новаторскими и рационализаторскими предложениями, которые имеют не только теоретическое, но и большое практическое значение. За исторически короткий период времени в Советской Армении создана научная школа акушер-гинекологов, имена лучших представителей которой известны за пределами нашей республики.